# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Տրանսֆորմացիոն փոփոխության պարադիգմը ընկած է ԵՀՀ Մարդու իրավունքների ծրագրի հիմքում. ԵՀՀ–ն աշխատում է անհանդուրժողականության, բռնության և խտրականության կառուցվածքային պատճառները, ինչպես նաև դերակատարների մոտեցումներն ու վարքագիծը վերափոխելու ուղղությամբ: Քննադատական մտածողության մեթոդաբանությունը՝ կարծրատիպերի կազմաքանդումը, քննարկման համար փակ թեմաներ բացելը, պարտադրված թեմատիկան և ընկալումները վերափոխելը, «ուրիշը» հասկացությունը վիճարկելը, վճռորոշ նշանակություն ունեն այնպիսի խնդիրներին անդրադառնալիս, ինչպիսիք են փոքրամասնությունների իրավունքները, խտրականության արգելքը և արտահայտվելու ազատությունը. ոլորտներ, որոնք ընկած են ԵՀՀ Մարդու իրավունքների ծրագրի մշակման հիմքում:

2013 – 2020 թթ. ծրագիրը ֆինանսավորվել է Նիդերլանդների Թագավորության դեսպանատան, Եվրոպայի խորհրդի Երիտասարդության հարցերով վարչության, ՄԱԿ–ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի և Democracy Reporting International (DRI) կազմակերպության կողմից:

ԵՀՀ յուրաքանչյուր ծրագրի խորքում ընկած մտածողության ու ըմբռնման հիմքը այն համոզմունքն է, որ ամենից առաջ պետք է անդրադառնալ մարդու իրավունքների խախտման համատեքստային, մշակութային և քաղաքական դրդապատճառներին: Հիմնախնդիրների խոր ուսումնասիրությունը, բոլոր գործընկերների և շահառուների հետ սերտ համագործակցությունն ու ոչ ավանդական լուծումների որոնումը այն գործիքակազմի տարրերից են, որ ԵՀՀ–ն կիրառում է իր ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում: Լինելով հետազոտական և ծրագրեր իրականացնող կազմակերպություն՝ ԵՀՀ–ն գործում է ամբողջական շրջափուլի՝ հետազոտությունից քաղաքականության մշակման համար խորհրդատվության տրամադրման և իրականացման տրամաբանությամբ:

Այս մասում ներկայացվում են մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնք անդրադառնում են տարիներ շարունակ ԵՀՀ Մարդու իրավունքների ծրագրի կողմից ուսումնասիրվող և ջատագովման ենթակա բազմապիսի հարցերին:

# ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2014 Թ.)

Փաստաթղթային հետազոտության նպատակն է ի մի բերել այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների և երիտասարդների վրա ազդեցություն ունեցող խնդիրներին ու որոշակի հարցերին, այդ թվում՝ նրանց նկատմամբ անհանդուրժողականությանն ու խտրականությանը, երեխաների բարօրության ու առօրյա կյանքի վրա վերջիններիս ունեցած ազդեցությանը: Փաստաթղթային սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ երկու խնդիրներն էլ վերաբերելի են Հայաստանին: Ուսումնասիրության ընթացքում վեր հանված խնդիրներից շատերը, օրինակ՝ վաղ ամուսնությունները և կրթությունից դուրս մնալու ցուցանիշները սերտորեն կապված են փոքրամասնություն հանդիսացող համայնքներում առկա ավանդույթների և երեխայի իրավունքի սահմանափակումների հետ:

Դաշտային հետազոտությունն առաջին փորձն է՝ ուսումնասիրելու խտրականության այն դեպքերը, որոնց բախվում են էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաները Հայաստանում՝ սոցիալական, ընտանեկան, եկեղեցական և համայնքային կյանքում՝ ըստ ՄԱԿ–ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի: Գործնական ապացույցների, դեպքերի ուսումնասիրությունների և նախկինում արված փաստաթղթային հետազոտությունների եզրահանգումների հիման վրա զեկույցը ներկայացնում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող եզրակացություններ և առաջարկություններ, որոնք կարող են նպաստել Հայաստանում խտրականության և անհանդուրժողականության նվազեցմանը:

Փաստաթղթային հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:

Դաշտային հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:






# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԵԶԴԻ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ (2020 Թ.)

Հայաստանում եզդի աղջիկների հանրային մասնակցության խթանմանն ուղղված նախագծի շրջանակում իրականացված այս հետազոտությունը նպատակ ունի ներկայացնելու Հայաստանում բնակվող եզդի աղջիկների առաջնահերթ կարիքները, վաղ ամուսնությունների նկատմամբ նրանց խոցելիության աստիճանը և սեփական կյանքի մասին որոշումներ կայացնելու գործընթացում ունեցած դերը:

Եզրակացությունները ցույց են տալիս, որ եզդի աղջիկներն ու կանայք խոցելի են՝ զրկված մասնավորապես կրթական, սոցիալական և մշակութային իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունից: Եզդիներին հատուկ սոցիալական կառուցվածքի, Հայաստանի մարզերում սոցիալ–տնտեսական իրավիճակի և անվտանգության պակասի պատճառով վաղ ամուսնությունները մեծ տարածում ունեն: Թեև Հայաստանը ստանձնել է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և վնասակար պրակտիկաների վերացման պարտավորություններ, եզդի աղջիկները լիարժեք չեն իրացնում իրենց իրավունքները ոչ միայն մշակութային և սոցիալական խնդիրների, այլև իրավական համակարգում առկա բացթողումների պատճառով:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:



# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱԿ–Ի ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (2014 Թ., ԱՆԳԼԵՐԵՆ)

Հետազոտությունը կենտրոնանում է Հայաստանում կրոնի ազատության թեմաների վրա: Մասնավորապես այն քննում է, թե ՄԱԿ–ի Մարդու իրավունքների մեխանիզմները և հատկապես ՄԱԿ–ի կանոնադրությունից և պայմանագրերից բխող կրոնի ազատության վերաբերյալ առաջարկությունները որքանով են ներկառուցված հայաստանյան օրենսդրությանը, կամ որքանով են դրանք արտացոլված կառավարության կողմից մշակվող քաղաքականություններում և իրականացվող աշխատակարգերում:

Հետազոտության նպատակն է օգտակար լինել առաջին հերթին ՀՀ կառավարությանը: Այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ այն կարող է գործածվել նաև մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների, միջկառավարական մարմինների և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից: Հաշվի առնելով՝ սույն հետազոտության զեկույցի ընթերողական ակնկալվող շրջանակը՝ հետազոտությունը կենտրոնացել է որոշակի առաջարկությունների, վերլուծությունների և սկզբունքների վրա՝ միևնույն ժամանակ բաց թողնելով հայտնի փաստերն ու մանրամասները: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ զգացել ենք, որ այսպիսի մոտեցումը կհանգեցնի տեղեկության ակնհայտ անբավարարության, կամ փաստարկը հասկանալու համար լրացուցիչ տեղեկություն է անհրաժեշտ, մենք ներառել ենք նաև անհրաժեշտ հիմնարար տվյալները:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:


EURASIA PARTNERSHIP FOUNDATION

**Assessing the Application of UN Mechanisms on Freedom of Religion in Armenia**

Study by Isabella Sargsyan

1

# ՄԱԿ–Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀՊԴ–Ի ՀԱՄԱՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔՀԿ–ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (2015 Թ., ԱՆԳԼԵՐԵՆ)

Հետազոտությունը նպատակ ունի աջակցելու Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, բայց կարող է օգտակար լինել նաև Հայաստանի կառավարությանը և միջազգային այն կազմակերպություններին, որոնք ցանկանում են աջակցել տեղական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը և այլընտրանքային զեկույցների մշակմանը:

Զեկույցը կենտրոնանում է Հայաստանում նախկինում չուսումնասիրված և հարաբերականորեն նոր թեմայի վրա: Կան Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրային մարմինների աշխատանքը և Համընդհանուր պարբերական դիտարկումը (ՀՊԴ) վերլուծող մի շարք զեկույցներ և փաստաթղթեր, օրինակ՝ որոշակի իրավունքների և ազատությունների տեսանկյունից: Այնուամենայնիվ, չկա մարդու իրավունքների միջազգային մեխանիզմների և մասնավորապես ՄԱԿ–ի պայմանագրային մարմիններին և ՀՊԴ–ին ուղղված այլընտրանքային զեկույցների պատրաստման գործում հայաստանյան ՔՀԿ–ների մասնակցության մասին թարմ տեղեկություններ պարունակող որևէ ուսումնասիրություն:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:


EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Assessing the involvement of Armenian CSOs in the preparation of alternative reports for UN Treaty bodies and the UPR

By Natalia Secretareva and Isabella Sargsyan

May, 2015

1

# ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱԿ–Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ (2017 Թ.)

Ձեռնարկը տրամադրում է ՄԱԿ–ի մարդու իրավունքների մեխանիզմներից օգտվելու վերաբերյալ համապարփակ և քայլ առ քայլ տեղեկություն հայկական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիական ակտիվիստների և այլ շահառուների համար՝ նպաստելու մարդու իրավունքների ոլորտում վերջիններիս գործունեությանը: Մասնավորապես ձեռնարկը համապարփակ կերպով ներկայացնում է ՄԱԿ–ի հատուկ ընթացակարգերի մասին տեղեկությունը, ինչպես նաև ցույց է տալիս ՄԱԿ–ի մարդու իրավունքների հարցերով զբաղվող մարմիններին և Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) շրջանակում այլընտրանքային զեկույցներ ներկայացնելու գործընթացը:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:

# ՄԱԿ–Ի ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ. ԵԶԴԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2019 Թ.)

Զեկույցը վերլուծում է ընդհանրապես երեխայի իրավունքներին և մասնավորապես փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող իրավական և կարգավորման շրջանակները: Այստեղ ներառված են նաև մեդիա մշտադիտարկման և մեծաթիվ եզդի բնակչություն ունեցող Արմավիրի մարզում անցկացված ֆոկուսխմբային վեց քննարկումների արդյունքները:

Սա Հայաստանում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների վրա կենտրոնացող առաջին այլընտրանքային զեկույցն է: Թեև երեխաները կրում են այն բոլոր դժվարությունները և իրավունքների այն բոլոր խախտումները, որոնց բախվում են երեխաները Հայաստանում առհասարակ, նրանք ունենում են նաև հատուկ բնույթի խնդիրներ, որոնք մինչ այժմ մեծ մասամբ դուրս են մնացել երկրում երեխաների իրավունքների մասին պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և տեղական ՀԿ–ների զեկույցներից: Սույն այլընտրանքային զեկույցը կենտրոնացած է բացառապես նման խնդիրների վրա և չի ներառում այն խնդիրները, որոնք վերաբերելի են Հայաստանի բոլոր երեխաներին՝ անկախ նրանց կրոնական և/կամ էթնիկ պատկանելությունից (օրինակ՝ մանկական աղքատությունը):

Զեկույցը կոչ է անում Կոմիտեին մի շարք հարցադրումներ անելու ՀՀ կառավարությանը «Կառուցողական երկխոսության» ընթացքում և հանդես է գալիս սրա վերաբերյալ առաջարկություններով:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



# ԲԱՎԱՐԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 1988Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ (2019 Թ.)

Սույն այլընտրանքային զեկույցի նպատակն է տեղեկություն տրամադրել GSP+–ի լսարանին և ՄԱԿ–ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (ՏՍՄԻԿ) ՀՀ կառավարության կողմից պատշաճ կենսամակարդակի իրավունքի իրացումն ապահովելու իր պարտավորությունների կատարման մասին: Զեկույցը կենտրոնանում է պատշաճ բնակարանի իրավունքի վրա: Դիտարկում է պատշաճ բնակարանի իրավունքի իրացմանը վերաբերող իրավական շրջանակը, ինչպես նաև 1988 թ. երկրաշարժից հետո մասնավորապես Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովմանն առնչվող մարտահրավերները:

Խմբային և խորքային հարցազրույցներ ու տեղայցեր են իրականացվել սույն զեկույցում ներկայացված տեղեկությունը հավաքելու համար: Ընտրվել են Շիրակի մարզը և մասնավորապես Գյումրի քաղաքը, որովհետև Գյումրիում անօթևանների խնդիրը Հայաստանի ամենահրատապ հումանիտար մարտահրավերներից է, որը որևէ կերպ իր լուծումը չի գտնում վերջին 31 տարվա ընթացքում:

Իրավական և դաշտային ուսումնասիրության վերլուծության արդյունքների հիման վրա զեկույցում ներկայացվում են մի շարք առաջարկություններ:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



# ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՇԵՇՏԱԴՐԵԼՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ (2019 Թ.)

Սույն այլընտրանքային զեկույցի նպատակն է GSP+ շրջանակներին և ՄԱԿ–ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (ՏՍՄԻԿ) տեղեկություն տրամադրել ՀՀ կառավարության կողմից Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 7–րդ հոդվածով սահմանված պարտավորությունների իրականացման վերաբերյալ: Հոդվածի շրջանակում սահմանվում է պետության պարտավորությունը՝ ապահովել յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը:

Անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների վրա ազդող իրավական, կարգավորող և քաղաքականության շրջանակի ընդհանուր քննարկումից հետո զեկույցը գնահատում է Սյունիքի մարզում հանքարդյունաբերության ոլորտում աշխատող անձանց աշխատանքային իրավունքները՝ կենտրոնանալով աշխատանքի անվտանգության և առողջության խնդիրների վրա: Այն ներառում է նաև 2019 թ. ապրիլին իրականացված դաշտային աշխատանքների արդյունքները, որոնց հիման վրա էլ ստեղծվել է այս զեկույցը:

Վերլուծության արդյունքների հիման վրա զեկույցում ներկայացվում են մի շարք առաջարկություններ:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



# ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎՐԱ (2019 Թ.)

Սույն այլընտրանքային զեկույցի նպատակն է GSP+ շրջանակներին և ՄԱԿ–ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (ՏՍՄԻԿ) տեղեկություն տրամադրել ՀՀ կառավարության կողմից Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 12–րդ հոդվածով սահմանված պարտավորությունների իրականացման մասին: Հոդվածով սահմանվում է պետության պարտավորությունը՝ ապահովել յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույն հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

Խմբային, զույգով և խորքային հարցազրույցներ են անցկացվել տարբեր սոցիալական խմբերի հետ մարզի 5 քաղաքներից երեքում: Բոլոր 5 քաղաքներում հարցազրույցներ են անցկացվել նաև բուժանձնակազմերի հետ: Հետազոտության մեթոդաբանությունը ներառում էր նաև որակական վերլուծություն:

Զեկույցը վերլուծում է ազգային օրենսդրությունը, քաղաքականությունը և աշխատակարգերը առողջության իրավունքի և փոխկապակցված չորս տարրերի համապատասխանելիության տեսանկյունից, այն է՝ հասանելիություն (availability), մատչելիություն (accessibility), էթիկական–մշակութային համապատասխանելիություն (acceptability) և որակ (quality):

Իրավական և դաշտային հետազոտության վերլուծության արդյունքների հիման վրա զեկույցում ներկայացված են մի շարք առաջարկություններ:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 35–ՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅՑ (2020 Թ., ԱՆԳԼԵՐԵՆ)

2019 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը առանձին զեկույց է ներկայացրել Մարդու իրավունքների խորհրդի 35–րդ նիստի շրջանում (2020 թ.) Հայաստանի Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակում: Զեկույցում արձանագրվում են ՀՀ կառավարության ջանքերը՝ ուղղված երկրի՝ մարդու իրավունքների հարցերով ունեցած վարկանիշի բարձրացմանը, ուշադրություն է հրավիրվում նաև մարդու իրավունքների հետ կապված նոր ի հայտ եկող մի շարք, մասնավորապես խտրականության բացառման, կրոնի կամ դավանանքի ազատության վերաբերյալ խնդիրների վրա: Ներկայացվում են նաև առաջարկություններ խնդրո առարկա հարցերի շուրջ:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



EURASIA PARTNERSHIP FOUNDATION

EURASIA PARTNERSHIP FOUNDATION
SUBMISSION TO THE HUMAN RIGHTS COUNCIL
UNIVERSAL PERIODIC REVIEW (UPR) OF ARMENIA
DURING ITS 35TH SESSION (2020)

Eurasia Partnership Foundation's mission is to empower people to effect change for social justice and economic prosperity through hands-on programs, helping them to improve their communities and their own lives. Paradigm of Transformative Change lies at the core of EPF's Human Rights Program: EPF works on changing the structural causes of intolerance, violence and discrimination, as well as the attitudes and behavior of actors. Critical thinking methodology – deconstructing stereotypes, opening up tabooed discussions, changing imposed narratives and perceptions, challenging the notion of 'the other' – is a key to addressing issues of minority rights, non-discrimination and freedom of expression, areas which are at the foundation of EPF's Human Rights programming.

Submission by:

Isabella Sargsyan, Nikolay Hovhannisyan
Eurasia Partnership Foundation
1/21 Azatutyan ave., apt.23,
Yerevan 0037, Armenia

Web: www.epfarmenia.am
Email: isargsyan@epfound.am, nhovhannisyan@epfound.am

1

# ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (2020 Թ.)

Սույն ուսումնասիրությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի հետազոտությանը՝ նպատակ ունենալով վեր հանելու ծառայության արդյունավետ գործունեությունը խաթարող բացերը և թերությունները, ստացված արդյունքների հիման վրա արձանագրելու ծառայությունը խոչընդոտող հիմնական գործոնները և առաջարկելու առաջնահերթ բարեփոխումների ուղղություններ:

Ուսումնասիրությունը ներկայացնում է նաև որոշ մտահոգություններ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, էլեկտրոնային վերահսկողության ու հաշտարարության գործընթացներում պրոբացիայի ծառայության դերակատարման վերաբերյալ:

Աշխատանքը, ի թիվս այլ խնդիրների, անդրադառնում է առանձին երկրների՝ ոլորտի առաջադեմ փորձին, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ոլորտի բարելավմանը և համակարգային բարեփոխմանն ուղղված առաջարկություններ:

Զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



# ՀՀ–ՈՒՄ ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ (2020 Թ.)

Վեճերի այլընտրանքային լուծման գոյություն ունեցող մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում ունեն հարաբերականորեն կարճ պատմություն: Արբիտրաժի համակարգը ներմուծվել է 2006 թ., երբ ընդունվեց Արբիտրաժի մասին ՀՕ–55–Ն ՀՀ օրենքը՝ փոխարինելով արբիտրաժային տրիբունալի նախկինում գոյություն ունեցող համակարգը:

Հայաստանում իրավաբաններն ընդհանուր առմամբ ձեռնպահ են մնում հաճախորդներին արբիտրաժ՝ որպես վեճերի լուծման միջոց դիմելու խորհրդատվությունից: Այնուամենայնիվ, քաջալերող է այն հանգամանքը, որ իրավաբաններն ընտրում են արբիտրաժը որպես վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմ հատկապես միջազգային տարրեր ունեցող բարդ ֆինանսական կամ բարդ շինարարական պայմանագրերի դեպքերում: Իրավաբանների կարծիքով արբիտրաժի առավելությունը գաղտնիությունն է՝ այլ երկրներում կայացված վճիռների ճանաչմանն ու կիրարկմանը զուգահեռ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնորդության ոլորտի համեմատությամբ արբիտրաժի ոլորտում խնդիրներն ավելի քիչ են, թեև դրանք բնույթով թե՛ օրենսդրական են, թե՛ գործնական:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:



# ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ (2020 Թ.)

Սույն ուղեցույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակում: Նախատեսված է դատական մշտադիտարկմամբ և լուսաբանմամբ հետաքրքրված կամ դրանցով զբաղվող՝ տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ–ի ներկայացուցիչների համար: Այնուամենայնիվ, այն կարող է կիրառել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է տեղեկություններ ստանալ դատական մշտադիտարկման և լուսաբանման վերաբերյալ ու զբաղվել նշյալ գործունեությամբ:

Ի թիվս մի շարք հարցերի՝ ուղեցույցն անդրադառնում է նաև արդար և դոնբաց դատաքննության իրավունքի՝ որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկի իրացմանն ուղղված մեխանիզմներին՝ դատական մշտադիտարկմանն ու լուսաբանմանը բոլոր դատավարություններում (քրեական, քաղաքացիական, վարչական): Ուղեցույցը սահմանում է դատական մշտադիտարկման սկզբունքները և մեթոդաբանությունը և կարող է կիրառվել՝ բարելավելու դիտորդների և լրագրողների հմտությունները դատավարությունների մասնագիտական մշտադիտարկման և լուսաբանման ոլորտում:

Ուղեցույցը կարելի է ներբեռնել այստեղից:

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՐՈՆԻ ԿԱՄ ՀԱՄՈԶՄՈՒՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ (2020 Թ., 2017 Թ.)

2017 թ. մայիսի 7–ին և 2019 թ. մայիսի 24–ին Երևանում տեղի ունեցան «Հայաստանում, Վրաստանում և աշխարհում կրոնի կամ համոզմունքի ազատության արդի խնդիրները» երկու տարածաշրջանային համաժողովները: Տարածաշրջանային համաժողովների նյութերի միմյանց հաջորդիվ լույս տեսած այս ժողովածուներն ընդհանուր պատկերացում են տալիս նիստերի մասին և ներկայացնում են զեկուցումների տեքստերը, որոնք անդրադառնում են, օրինակ, կրոնի և համոզմունքի ազատության գլոբալ մարտահրավերներին, կրոնի և համոզմունքի միջազգային չափորոշիչներին, Հայաստանում և Վրաստանում դրանց հետ կապված իրավիճակին, կրթության, աշխարհիկության, տղամարդկանց և կանանց միջև հավասարության հարցերին, հակամարտության վերափոխման մեջ միջկրոնական երկխոսության դերին և մրցակցող իրավունքներին:

Այս համաժողովները հարթակ տրամադրեցին պաշտոնյաներին, կրոնական առաջնորդներին, կրոնական խմբերին և կազմակերպություններին, կրոնի և համոզմունքի ազատության հարցերով զբաղվող հայաստանյան և վրացական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, միջազգային փորձագետներին, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներին՝ տարբեր տեսանկյուններից քննարկելու կրոնի և համոզմունքի ազատության հետ կապված իրավիճակն ու զարգացումները:

2020 թ. զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:

2017 թ. զեկույցը կարելի է ներբեռնել այստեղից:



# COVID–19–ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (2020 Թ.)

Ուսումնասիրությունն իրականացվել է երկրում Քովիդ–19 վիրուսի բռնկման պատճառով արտակարգ դրության արտասովոր պայմաններում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բնակվող միգրանտները հատկապես խոցելի են Քովիդ–19–ի ուղիղ և անուղղակի ազդեցությունների նկատմամբ: Միգրանտների մեծ մասը բնակվում է առանձին կամ հանրակացարանային պայմաններում և բախվում է կորոնավիրուսին առնչվող առողջական սպառնալիքներին: Միգրանտների համայնքների խոցելիությունները, մասնավորապես լեզուների չիմացությունը, աշխատանքային պայմանները և նրանց ընդհանուր սոցիալ–տնտեսական վիճակը պետք է հաշվի առնվեն Քովիդ–19–ի ազդեցության չեզոքացման նպատակով համակողմանի արձագանքման միջոցառումները մշակելիս:

Թեև Հայաստանում միգրանտներն իրավունք ունեն օգտվելու համապատասխան առողջապահական ծառայություններից (եթե նրանք ունեն համապատասխան փաստաթղթերը), այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են լեզվական խոչընդոտները և դիմելու հասցեականության մասին գիտելիքի բացակայությունը, հանգեցնում են առողջապահական ծառայությունների անբավարար հասանելիության:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը, միջազգային կազմակերպություններին, տեղական մարդասիրական կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանն ուղղված միջնաժամկետ և երկարաժամկետ առաջարկությունները շեշտում են մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման, ապացույցների վրա հիմնված միջամտությունների և տեղական իշխանությունների, նախաձեռնող տեղական խմբերի և զանգվածային լրատվության միջոցների դերի և համագործակցության նշանակությունը:

Հետազոտությունը կարելի է ներբեռնել այստեղից:



# ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (2017 Թ.)

«Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» խորագրով հետազոտությունների ժողովածուն լույս է տեսել: Ուսումնասիրություններն իրականացվել են Հայաստանում և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ:

Այստեղ ներկայացված են հանդուրժողականության և անհանդուրժողականության ակունքներն ու դրսևորումները հայալեզու՝ սերնդեսերունդ փոխանցված տեքստերում: Հետազոտություններն ընդգրկում են հայ միջնադարյան ավանդավեպերը, 19–րդ ու 20–րդ դդ. դասական արձակը, Սփյուռքի գրականությամբ հանդերձ, հետխորհրդային Հայաստանի արձակն ու դասագրքերը: Գիրքը քաղվածքների էքսկուրս է ողջ հայ գրականությունով, ինչն իր հերթին առանձնահատուկ հաճույք է պարգևում ընթերցողին և հպանցիկ պատկերացում տալիս հայ գրականության զարգացման մասին:

Գիրքը կարելի է ներբեռնել այստեղից: